



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 սեպտեմբերի 2022 թվականի N 1392 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 700-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց համազգեստի ձևն ու կրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 13-ի N 1081-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 700-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի 5-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետում «Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կաչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը:» նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, կարվում են տեսչական մարմնի տարբերանշանները:»,

բ. 1-ին ենթակետում «Վերնաշապիկի թևքերին կարվում են շրջանաձև կաչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են տեսչական մարմնի խորհրդանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը (նկար 1):» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Վերնաշապիկի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, կարվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (նկար 7), ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, տեսչական մարմնի թևքանշանը (նկար 5):»,

գ. 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2) կիսավերարկու ձմեռային՝ մուգ մոխրագույն անջրանցիկ (անջրաթափանց) կտորից: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծավոդ օձիքից: Կիսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և տաք ներդիրով է, բաճկոնին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք, որը կոճկվում է 7 օղակներով և բաճկոնի օձիքին կարված են 7 հատ 15 մմ տրամագծով պլաստմասսայե կոճակներ: Կիսավերարկուն կոճկվում է 60-65 սմ երկարությամբ շղթայով: Գոտու կողային մասերն ունեն 14-20 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված են 16 սմ բացվածքով գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում՝ կափույրի տակ, ներկարվում են 15 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում՝ ծոցագրպան: Թևքերը երկկարանի են: Ներքևում՝ կարագծերում, անցկացված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, կարվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (նկար 7), ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև,

տեսչական մարմնի թեքանշանը (նկար 5): Պետական վերահսկողություն իրականացնող անձը կհսավերարկուն կրում է երեք տարի ժամկետով.»,

դ. լրացնել նոր՝ 2.1-ին ենթակետով.

«2.1) կհսավերարկու աշնանային՝ մուգ մոխրագույն անջրանցիկ (անջրաթափանց) կտորից: Կհսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծավոդ օձիքից: Կհսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով է: Կհսավերարկուն կոճկվում է 60-65 սմ երկարությամբ շղթայով: Գոտու կողային մասերն ունեն 14-20 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված են 16 սմ բացվածքով գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում՝ կափույրի տակ, ներկարվում են 15 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում՝ ծոցագրպան: Թևքերը երկկարանի են: Ներքևում՝ կարագծերում, անցկացված է էլաստիկ ժապավեն: Կհսավերարկուի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, կարվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (նկար 7), ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, տեսչական մարմնի թեքանշանը (նկար 5): Պետական վերահսկողություն իրականացնող անձը կհսավերարկուն կրում է երկու տարի ժամկետով.»,

ե. 4-րդ ենթակետում «կհսավերարկուի» բառից հետո լրացնել «, շապիկի», իսկ վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա:»,

զ. 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6) տեսչական մարմնի տարբերանշան՝ ուղղանկյուն, 10x2 սմ չափսերով, վրան ասեղնագործվում է համապատասխան ստորաբաժանման անվանման հապավումը, իսկ աջ կողմում՝ կրողի անվան առաջին տառը, ազգանունը (նկար 9, 10): Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա:»,

է. 7-րդ ենթակետում վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա:»,

ը. 8-րդ ենթակետում «տարբերանշանը (նկար 1)» բառերը փոխարինել «խորհրդանշանը (նկար 1, 2, 3, 4)» բառերով, իսկ «երկու տարի» բառերը՝ «մեկ տարի» բառերով».

2) հավելվածը լրացնել նոր բովանդակությամբ 7-րդ կետով.

«7. Պետական վերահսկողություն իրականացնող կին պաշտոնատար անձի ցանկության դեպքում տարեկան երկու կիսաշրջագգեստի փոխարեն կարող է տրամադրվել տարեկան երկու տաբատ կամ մեկ կիսաշրջագգեստ և մեկ տաբատ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ